ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Տաշիր **04/23/2026**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Վահե Անախասյանը, Կարեն Բաղդասարյանը, Տաթեվիկ Գասպարյանը, Վիգեն Գրիգորյանը, Նարինե Խաչատրյանը, Գոհար Մանուկյանը, Ջոն Պողոսյանը, Վահան Ստեփանյանը, Արման Վարդանյանը, Իզաբելա Տոմեյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Սամվել Շահբազյան, Նաթելլա Մուրադյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Էդգար Արշակյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Նունե Սոլոյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2026 թվականի ապրիլի 23-ի հերթական նիստի օրակարգը՝
1. Հայստանի Հանրապետությաան Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N109-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին,
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը 2026 թվականի բյուջեի կատարման առաջն եռամսյակի ընթացքի մասին,
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը նվիրելու մասին,

4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի N 19-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին ,
5. « Տաշիրի բժշկական կենտրոն » փակ բաժնետիրական ընկերությունը համակարգիչ նվիրելու մասին,
6. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրելու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2026 թվականի փետրվարի 10-ի N 10-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին,
7. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 44-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24 -Ի N 109-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N109-Ն որոշման NN1-6 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն NN1-6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 45-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆԱԹԵԼԼԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ)

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է

1. Ընդունել ի գիտություն 2026 թվականի բյուջեի կատարաման առաջին եռամսյակի ընթացքի մասին Հայասատանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՋՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 46-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ, 595-րդ, 596-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և հիմք ընդունելով Սուլթան Հովհաննեսի Գրիգորյանի դիմումը (մուտք ՝ 13.01.2026-ի ՔԴ 25-26) և այն, որ Սուլթան Հովհաննեսի Գրիգորյանի ընտանիքը նախկինում չի օգտվել հողի սեփականաշնորհումից, չի ստացել (ձեռք բերել) տնամերձ կամ բնակելի տան շինարարության և դրա սպասարկման համար հողամասեր՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12022024-06-0060 վկայական, տրված՝ 12.02.2024-ին), գ. Արծնի, 6-րդ փողոց, թիվ 5 հասցեում գտնվող 135,6 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տունը և դրա սպասարկման համար անհրաժեշտ 0.278 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման (կադաստրային ծածկագիր՝06-018-0031-0002) հողամասը նվիրել Սուլթան Հովհաննեսի Գրիգորյանին և Վլադիմիր Մարտինի Էգնատոսյանին:
2. Նվիրառուներ Սուլթան Հովհաննեսի Գրիգորյանին և Վլադիմիր Մարտինի Էգնատոսյանին հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

3. Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:
4. Նվիրատվության մասին պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցման և նոտարական վավերացման հետ կապված ծախսերը կատարվում են նվիրառուների կողմից:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 47-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 25-Ի N 19-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու կանոնակարգի 28-րդ կետով , « Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 37-րդ հոդվածով՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների հետևյալ կազմերը՝
1) Կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և սոցիալական հարցերի մշտական

հանձնաժողով՝
Ռուզաննա Ավդալյան
Տաթևիկ Գասպարյան
Աիդա Մովսիսյան
Իզաբելա Տոմեյան
Արմենակ Սոլոյան
Նարինե Խաչատրյան
2) Ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝
Գոհար Մանուկյան
Կարեն Բաղդասարյան
Էդգար Արշակյան
Վիգեն Գրիգորյան
Արման Վարդանյան
3) Քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողով՝
Էդուարդ Սողոյան
Հայկ Մարգարյան
Գուրգեն Ջավուկցյան
Նորայր Բաղդասարյան
Վահան Ստեփանյան
4) Գյուղատնտեսության, բնության և շրջակա միջավայրի պահպանության մշտական հանձնաժողով՝
Անուշ Սուքիասյան
Ջոն Պողոսյան
Հայկ Մարդոյան
Յուսուբով Վիտալի
Վահե Անախասյան
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին » N 19-Ա որոշումը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -0 Դեմ -0 Ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 48-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ</u>

« ՏԱՇԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ » ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՆՈՒՆԵ ՍՈԼՈՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝

Տաշիր համայնքն ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Տաշիր համայնքի ղեկավարին «Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկի հաշվեկշում ընդգրկված սեղանի համակարգիչը (սեղանի համակարգիչ, համակարգիչ՝ պրոցեսոր Core i5-12400 /օդափոխիչ DK-07I ID-COOLING/ մայր սալիկ Asus Prime B760M-RD4/ օպերատիվ հիշողություն՝ LEXAR8GB/ կոշտ սկավառակ SSDKingston 500Gb SNV3S/500G/ ստեղնաշար, մկնիկ LOGITECHMK120/ մոնիտոր Philips 23,8” 24E2N11) նվիրել « Տաշիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ աշխատանքները պաշաճ կատարելու համար:
2. Համայնքի ղեկավարին՝ համակարգիչը հանել «Տաշիրի համյնքապետարանի աշխատակազմ» կառավարչական հիմնարկի հաշվեկշից, գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություն և ներկայացնել ավագանու հաստատմանը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 49-Ա)*

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆԸ ԵՎ Ա. ՍՈԼՈՅԱՆԸ ՉԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ

<u>ԼՍԵՑԻՆ</u>

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 10-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ՍԱՄՎԵԼ ՇԱՀԲԱԶՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 689-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, « Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 37 -րդ հոդվածով

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Բնական գազի անխափան մատակարարման գազահամակարգերի սպասարկման և անվտանգ սպասարկման նպատակով «Հայաստանի Հանրապետության Սարչապետ համայնքի Ձորամուտ և Պետրովկա բնակավայրերի գազաֆիկացվում» 2022 թվականի սուբվենցիոն ծրագրով կառուցված և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում ստացած Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ղեկավարին՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել գույքի անհատույց օգտագործման պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման :
3. Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի 2026 թվականի փետրվարի 10-ի «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությանը անհատույց օգտագործման իրավունքով գույք տրամադրլու և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի հոկտեմբերի 24-ի N 96-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 10-Ա որոշումը:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 50-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ՝

Տաշիր համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2026 թվականի մայիսի 22-ին, ժամը՝ 14:30-ին:

Քվեարկության արդյունքները.

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ
Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ
Հ. ՄԱՐԴՈՅԱՆ
Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ
Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ
Ա. ՍՈԼՈՅԱՆ
Է. ՍՈՂՈՅԱՆ
Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Որոշումն ընդունված է. *(Որոշում N 51-Ա)*

Ավագանու անդամներ
Է. ԱՐՇԱԿՅԱՆ

Ռ. ԱՎԴԱԼՅԱՆ

Ն. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հ. ՄԱՐԴՈՅԱՆ

Ա. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Վ. ՅՈՒՍՈՒԲՈՎ

Գ. ՋԱՎՈՒԿՑՅԱՆ

Ա. ՍՈԼՈՅԱՆ

Է. ՍՈՂՈՅԱՆ

Ա. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԷԴԳԱՐ ԱՐՇԱԿՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Նունե Սոլոյանը

_____